ՄԻՋԱԳԵՏՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Ա. Հ.

Միջագետքը մեկն է այն տարածաշրջաններից, որտեղ հին դարերում տեղի են ունեցել ազգացեղային տարբեր խմբավորումների տեղաշարժեր, ձևավորվել են հնագույն ստրկատիրական հասարակություններն ու պետությունները, ծագել քաղաքակրթական օջախները, որոնք մեծ ազդեցություն են գործել ողջ հին աշխարհի քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության վրա[1]: Սակայն առ այսօր դեռևս մեկնաբանված չեն տարածաշրջանում բնակություն հաստատած ազգացեղային խմբերի անվանումները, որոնց ստուգաբանությունը հնարավորություն կընձեռեր նոր փաս-տերի հիման վրա քննել տարածաշրջանի պատմության բազմաթիվ հարցեր:

Վերին Միջագետքի (Միջագետք Հայոց) տարածաշրջանը մինչև մ.թ. 37 թ. Մեծ Հայքի թագավորության մաս է կազմել, որի սահմանների մեջ ընդգրկվել են Տուր-Աբդին (Ծավդեք) և Արվաստան գավառները՝ Մծբին կենտրոնով[2], ինչպես նաև պատմական Ասորեստանի զգալի մասը: Ըստ հայոց ազգային ավանդության՝ Արամ նահապետը "...զմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան հարկի... բազում ժամանակս"[3]: Մեկ այլ հաղորդ-ման համաձայն՝ "Եւ քանզի զարևելեանն և զհարաւայինն նուա-ճեալ, յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ, սիսակեանցն զարևելս, և որք ի Կադմեայ տանէն՝ զԱսորեստանին ոչ ինչ այնուհետև կասկած շփոթից ուստեք ունէր"[4]:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ "Միջագետք Հայոց"-ի Անգեղ տուն գավառը "Ոստան Հայոցն" էր վաղ ժամանակներում[5]:

Երկրամասում հայերից բացի բնակվել են նաև այլ ազգացեղային խմբեր: Մ.թ.ա. VII դ. Ամիդի մոտ բնակություն էին հաստատել իրանական թափառական ավարառուներ, որոնք ասսուրական արձանագրություններում հիշատակվում են որպես uman manda ("մանդա" - մարդիկ, ժողովուրդ, բազմություն)[6]: Հայտնի է նաև, որ Տիգրիսի վերնագավառի լեռնային շրջաններում խոսում էին խուռիերենի բարբառներով, իսկ

---

[1] *Տե՛ս Всемирная история, т. I, М., 1955, с. 139.*

[2] *Տարածաշրջանի խոշոր քաղաքն էր Ամիդը: Նշանավոր ամրոցներն էին Բնաբեղը և Մարդե բերդը (*Երեմյան Ս., *Հայաստանը ըստ "Աշխարհացոյց"-ի, Ե., 1963, էջ 71):*

[3] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Ե., 1991, էջ 45:*

[4] *Նույն տեղում, էջ 46:*

[5] *Տե՛ս* Փավստոսի Բուզանդացւոյ *Պատմութիւն Հայոց, Ե., 1987, էջ 324:*

[6] *Տե՛ս* Ղափանցյան Գ., *Հայոց լեզվի պատմություն, Հին շրջան, Ե., 1961, էջ 45-46,* Գավուքչյան Մ., *Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Ե., 2010, էջ 18:*

Հայաստանի հարավային մասում պաշտամունքի առարկա էր երկնքի, անձրևի և ամպրոպի խուռիական աստված Šanta-ն: Դիցանունը հայերենում պահպանվել է որպես հասարակ անուն՝ շանթ[7]:

Ուռհան ժամանակին եղել է խուռիների պետության կարևոր կենտրոններից մեկը, որը կառուցողներին Փավստոս Բուզանդը համարել է հայերի նախնիներ[8]:

Ճանապարհը, որը կապում էր Էլամը *և* Աքքադը *Ասորիքի, իսկ այնուհետև Պաղեստինի ու Եգիպտոսի հետ, կարևոր նշանակություն ուներ Միջագետքի համար: Այն ընթանում էր Տիգրիսով դեպի վեր, մինչև Եփրատի մեծ աղեղի անցումները, որոնք* Միջագետքը *բաժանում էին Ասորիքից: Մյուս ճանապարհը, որը Բաբելոնից Եփրատով տանում էր դեպի* Ասորիք, *անցնում էր* Ասորեստանի *սահմաններից մոտավորապես 200 կմ հեռավորության վրա: Մեկ այլ առևտրական կարևոր ճանապարհ, որը գալիս էր* Փոքր Ասիայից *և* Հայաստանից, *անցնում էր* Ասորեստանի *միջով և միանում* Բաբելոնից Ասորիք *տանող արևելյան ճանապարհին[9]: Քաղաքները, որոնք հետագայում կազմեցին ասսուրական պետության միջուկը* (Աշշուր, Նինվե, Արբելա *և այլն), մինչև մ.թ.ա. XV դ. միասնական քաղաքական և նույնիսկ էթնիկական ամբողջություն չէին ներկայացնում: Մ.թ.ա. XVI-XVդդ. դրանք կախվածություն ունեին* Բաբելոնի[10] *և Միտանիի թագավորներից: Մ.թ.ա. III հազ. շումերական տեքստերն այդ տարածաշրջանն անվանում էին* Սու բիր, *իսկ մ.թ.ա. III-II հազ. աքքադական տեքստերը՝* Սուբարտու *կամ* Շուբար-տու: *Այդ պատճառով տեղական բնակչությանն անվանում էին* սուբարեցիներ *կամ* շուբարեցիներ: *Հետազոտողների մեծ մասը գտնում է, որ դա շումերա-աքքադական անվանումն է այն ցեղերի, որոնք իրենց կոչում էին* խուռիներ[11]: *Ըստ մեկ այլ վարկածի՝ տարածաշրջանի բնակչության* խուռիներ *անվանումը տրվել է* խեթերի, *իսկ* սուբարիները՝ ասորեստանցիների[12] *կողմից:*

---

[7] Ղափանցյան Գ., *նշվ. աշխ., էջ 120-121:*

[8] Գավուքչյան Մ., *նշվ. աշխ., էջ 102, 190:*

[9] *Տե՛ս Всемирная история, т. I, с. 312.*

[10] *Մ.թ.ա. XVIII դ. կեսերին կասիտական ցեղերը, Իրանական բարձրավանդակից մուտք գործելով Միջագետք, հաստատվում են Եփրատ և Խաբուր գետերի ջրա-խառնվելու շրջանում՝ Խանա երկրում: Մինչև մ.թ.ա. XII դ. նրանք իշխել են Բա-բելոնում (տե՛ս* Ավետիսյան Հ., *Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջա-գետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII- IX դդ. Ե., 2002, էջ 54):* Կասիտ *էթնիկական անունը բաղկացած է* կաս *(=լեռ) բառից (*Ղարագյոզյան Ա., *Պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ, Ե., 2015, էջ 54) և* իտ *տեղանիշ ածանցից. արտահայտում է* լեռնաբնակ *իմաստը:*

[11] *История древнего мира. Древний Восток, Минск, 1999, с. 311.* Խեթերեն, աքքադերեն և խուռիերեն *սեպագիր արձանագրություններում* խուռիների երկիրը *հիշատակվում է* Միտանի, Խուռի և Նահրայնա *անուններով (*Ավետիսյան Հ., *նշվ. աշխ, էջ 24-28):*

[12] Հակոբյան Թ., *Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1968, էջ 60:*

Հիշատակելի է, որ շումերերեն Su-bir₄/ Subar նշանակել է **“ջրի ափին գտնվող երկիր”**[13]*: Հետևաբար,* **սուբարիներ** *կամ* **շուբարիներ** *անվանումն արտահայտել է* **“ջրի ((՝գետի) ափին բնակվող մարդիկ կամ ժողովուրդ”** *իմաստը: Ըստ աքքադական արձանագրությունների՝* **սուբարիները** *եղել են* **սպիտակամաշկ** *և* **շիկահեր**[14]*: Այնինչ “արձանագրություններում այսպիսի որակումներ չեն տրվել խուրրիներին”*[15]*:*

Ռաս Շամրայում հայտնաբերված ուգարիտյան մի սեպագիր արձանագրության մեջ միաժամանակ և միասին հիշատակվել են <u>*Hri*</u> **(Խուռի)**, <u>*Hti*</u> **(Խաթի)** *և Šbr (շուբարի) ցեղային անվանումները: Այս փաստը հիմք է դարձել եզրակացնելու, որ խուռիները և սուբարիները տարբեր ժողովուրդներ են: Մասնագետներից ոմանք, հիմք ընդունելով սուբարիների և խուռիների մասին կարծիքները, Šbr* **(շուբարի)** *տարբերակի մեջ տեսնում են* **ասորեստանցիներին**[16]*:*

Սուբարի *էթնիկական անվան առաջացումն ըստ էության պայմանավորված էր աշխարհագրական գործոնով: Այդ անվամբ ընկալելի են ոչ միայն Հյուսիսային Միջագետքում հաստատված* **խուռիները**, *այլև Միջագետքի տարածաշրջանում բնակվող մյուս ազգա-ցեղային խմբերը: Նեղ իմաստով՝ այդ էթնիկական անունը վերաբերում է ասսուրական աղբյուրների* **Կադմուխի** *երկրամասի բնակիչներին: Ըստ հայոց հնագույն ավանդության՝ հայերի նախնի* **Հայկ նահապետը Արարադի** *երկիրը որպես բաժնեկալվածք նվիրել էր իր թոռ* **Կադմոսին՝** *Արամանյակի որդուն*[17]*: Ժամանակին նշվել է, որ “Կադմոս անվան իրական կապը այս երկրամասի հետ ամրապնդվում է այն հանգամանքով, որ Կորդուքի անմիջական հարևանությամբ՝ Տիգրիսի մյուս մասում (մասամբ և այս) ափին, տարածվում էր ասսուրական աղբյուրների* **Կադմուխի** *երկիրը”*[18]*: Նկատենք նաև, որ* **Կադմուխի** *երկրանվան հայկական տարբերակն է* **Ծաւդէք**[19] **(<*Ծաւդէհք):**

---

[13] **Ղարագյոզյան Ա.,** *Հայոց հնագույն պատմության հարցեր, Ե., 2015, էջ 7:*

[14] **Գավուքչյան Մ.,** *նշվ. աշխ, էջ 7:*

[15] *Նույն տեղում:*

[16] *Նույն տեղում, էջ 272-273:*

[17] *Տե՛ս* **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 33, 113:*

[18] *Տե՛ս* **Սարգսյան Գ.,** *Մովսես Խորենացու “Հայոց պատմությունը” և սեպագրական աղբյուրները (Պատմա-բանասիրական հանդես, 1992, N 2-3, էջ 42):* **Կադմուխի** *անվամբ եղել է նաև “քաղաք Վերին (Հայոց) Միջագետքում, Տուր-Աբդին երկրամասում” (* **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Ե., 1998, էջ 876):*

[19] **Еремян С.** *Армения по ,,Ашхарацуйцу,, (Армянской географии VII века), Е., 1961, տե՛ս քարտեզը: Մ.թ.ա. 1165 թ. 20 հազար մուշկեր իրենց առաջնորդների գլխավորությամբ ներխուժում են* **Ալզի** *և* **Պուրուլումզի** *երկրներ, իսկ 1115 թ.՝* **Կադմուխի:** *Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար I-ի զորքերը հաղթում են նրանց: Ասորեստանի արքան 6000 գերիների դարձնում է իր հպատակները: Նույն տարածաշրջանում ասորեստանյան զորքերը հանդիպում են 4000* **կասկերի** *(այլ համատեքստերում՝* **աբեշլայցիներ***) և*

Հայտնի է, որ խուռիների ցեղանունն է ẖurr-, որը "հանդես է գալիս այլևայլ ձևավորումներով, ինչպես Ḫurri կամ Ḫurra (Ḫu-ur-ra) քաղաքանուն, Ḫurlasa (id) ẖurla "խուռիտ", ẖurlili "խուռերեն", Ḫ-u-ur-ra (xorra) աստվածանուն, Ḫurruẖe umini "խուռյան երկիր" և այլն"[20], մեկ այլ դիտարկմամբ՝ "...ẖur-ri(ẖor-ri "խոռիտ"(Աստվա-ծաշնչի khor "քորացի", այսինքն՝ խորիտ, սուբարացի..."[21]:

Ժամանակին նշվել է, որ "Կրակի այրող բնութեան կից լուսափայլութիւնն այլ իհարկե դրդող և մեծ դրդող էր պաշտաման"[22]: Հայտնի է նաև, որ "կրակը կոչվել է ըստ արևի"[23]: Հետաքրքիր է Վանի բարբառում պահպանված **խուրնիկ, խուռնի խրեղէն (հուրնիկ, հուրն ի հրեղէն)** *արտահայտությունը, որը մեկնաբանվում է որպես "շատ գեղեցիկ, իբր թէ հրեղեն էակ"[24] և բնութագրում է* **արևին:** *Ավելին, հուր բառը, որպես երկրաչափական մարմին, նշանակել է* **բրգաձև.** *"քանզի... հրոյ ձև է"[25]: Այս կապակցությամբ հիշատակելի է, որ դեռևս հին թագավորության ժամանակաշրջանի Եգիպտոսում* **Արև-աստծո** *կենդանի նմանակ համարվող փարավոնների դամբարանները բրգաձև շինություններ էին[26]: Հիշարժան է նաև* **Նեմրութի** *դամբարանաբլուրը, որն ունի "բուրգի ձեւ եւ բավականին բարդ կառուցվածք, դրանով իսկ համեմատելի է եգիպտական բուրգերի հետ: Երկու հուշարձաններն էլ նախ և առաջ նվիրված են եղել Արեւի աստվածներին"[27]:*

Ḫurr- էթնիկական անունն ըստ էության ընկալվում է որպես տեղական աստվածության անվանում (հմմտ. "Ḫu -u-ur-ra (xorra) աստվածությունը")[28]: Խուռա անվամբ եղել է քաղաք **Հյուսիսային Միջագետքում** *(ᵘʳᵘḪu-ur ra), որը վկայվել է Ասորեստանի* **Ադադներարի I-ին** *(մ.թ.ա. 1279-1213 թթ.) թագավորի արձանագրության մեջ[29]:* **Խուռան,** *ըստ երևույթին, համանուն քաղաքի հովանավոր աստվածն էր, ամենայն հավանականությամբ՝* **արևային աստվածություն:** *Հայտնի է, որ Հին Արևելքի երկրներում պաշտամունքի հիմնական առարկան եղել է* **Արևը**: *Դեռևս հին թագավորության*

ուրումեացիների, *որոնք ընդունում են Ասորեստանի գերիշխանությունը [***Дьяконов И.М.*** *Ассиро-вавилонские источники по истории Урарту (Вестник древней истории, 1951, N 2)]:*

[20] **Ղափանցյան Գ.,** *նշվ. աշխ, էջ 114:*

[21] *Նույն տեղում, էջ 180:*

[22] **Ալիշան Ղ.,** *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 41:*

[23] **Марр Н.** *Избранные работы, т. V, М.-Л., 1935, с. 231.*

[24] **Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 126:*

[25] *Նույն տեղում:*

[26] *Տե՛ս История древнего мира. Древний Восток, с. 74.*

[27] **Զախարյան Ա.,** *Աբու Սիմբելի և Նեմրութ լեռան հուշարձանախմբերը. համեմատական վերլուծություն (Գավառի պետհամալսարանի գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2015, էջ 215):*

[28] **Ղափանցյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 114: Հմմտ. պրս. xor- "արև" բառը (տե՛ս* **Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան, հ. III, Ե., 1977, էջ 115):*

[29] **Ավետիսյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 88:*

ժամանակաշրջանի Եգիպտոսում փարավոնները համարվել են արևի աստված **“Ռա-ի որդիներ”**[30]*: Միտանի պետությունում ևս թագավորի անձը աստվածացվել և համադրվել է* **Արև-աստծուն** *(հմմտ. պրս.* **խոռե** *բառը, որը նշանակում է* **արևային, աստվածափայլություն, աստվածային շնորհ՝ տրված թագավորներին և մարգարեներին**)[31]*: Ուշագրավ փաստ է, որ Միտանիի արքա* **Սաուշատարի** *կնիքի վրա (մ.թ.ա. 1450 թ.) պատկերված է արևի թևավոր սկավառակ, որի երկու կողմերում Արևի ու կրակի աստվածությունը խորհրդանշող արծիվներ են*[32]*:*

Ըստ վաղ ձևավորված մի տեսակետի՝ մ.թ.ա. 2300-2250 թթ. ընթացքում **Էլամի Կուդուրնախունտե** *թագավորը, արշավանք ձեռնարկելով դեպի* **Քաղդեա,** *այնտեղ հիմնում է մի նոր թագավորական հարստություն: Նա իրենց բնակության վայրերից վտարում է երկու սեմական ցեղերի:* **Ասսուր** *աստծուն երկրպագող ցեղը շարժվում է դեպի հյուսիս և բնակություն հաստատում Տիգրիսի միջին հոսանքի շրջանում, որտեղ հիմնում է* **Ասսուր** *բնակավայրը, իսկ երկրորդը հաստատվում է Միջերկրականի ափերին և հայտնի դառնում* **փյունիկիացի** *անունով*[33]*: Սակայն* **փյունիկիացի** *անվանումն ունի շատ հին ծագում: Հին եգիպտացիները դեռևս մ.թ.ա. III հազ. վերաբերող իրենց արձանագրություններում հիշատակում են ասիական ցեղերի, որոնց անվանում էին* **“փեննեխ”**, *որից հույները կազմել են* **“փոյնիկս”, “փոյնիկես” (“կարմրագույն”, “թխագույն”)**[34]*:*

Պատմագիտության մեջ նկատվում է ասսուրական պետությունը աքքադական սեմական ցեղերից կազմավորված համարելու միտում[35]*: Մասնագետները չեն բացառում նաև, որ դրա ամբողջ բնակչությունը կամ ինչ-որ մասը եղել է ազգակից Հայկական լեռնաշխարհի ուրարտացիներին:* **Աշշուրի** *կառավարիչների անունների ուսումնասիրությունը հիմք է դարձել այն եզրակացության, թե* **խուռիերենը** *և* **աքքադերենը** *մինչև մ.թ.ա. II հազ. վերջը տարածված էին* **Աշշուրում** *և շրջակա բնակավայրերում*[36]*: Սակայն “Աշշուրի առաջին կառավարիչների անունները գրեթե ամբողջովին պատկանում են “այսպես կոչված, “բանանային” և “սուբարեական” լեզուների ընդհանրությանը, ինչը կարող է հուշել Աշշուրի վաղ բնակչության էթնիկ կազմի մասին, որը սկզբնապես սեմախոս չէր…”*[37]*: Ժամանակին նշվել է, որ “Ասորի*

---

[30] *История древнего мира. Древний Восток, с. 74.*

[31] *Տե՛ս Персидско-русский словарь, т. I, М., 1970, с. 581.*

[32] **Գավուքչյան Մ.,** *նշվ. աշխ., էջ 190:*

[33] **Լեռ,** *Երկերի ժողովածու, հ. I, Ե., 1966 , էջ 37:*

[34] *Հին աշխարհի պատմություն, հ. I, Հին Արևելք, Ե., 1938, էջ 427:*

[35] *История древнего мира. Древний Восток, с. 377. Տե՛ս նաև История древнего мира. Ранняя древность, М., 1983, с. 188.*

[36] *Всемирная история, т. 1, с. 312-313.*

[37] *Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1, հին շրջան, Ե., 2013, էջ 55: Ուրի III հարստության օրոք համակարգվեց ընդհանուր շումերական դիցարանը՝ նիպուրյան* **Էնլիլ** *աստծո*

ժողովուրդն իր ծագումովը Ասորերեն խոսող մի ժողովուրդ չի եղել՝[38]*: Նկատենք նաև, որ մարդաբանները "...շատ վաղուց արդեն պնդում են, թե Ասուրի ցեղի մեջ շատ մեծ չափով Armenoid տարրը պետք է գտնվի՝*[39]*:*

Ասորեստանը մեկուսացված աշխարհ էր՝ երկու կողմից շրջապատված լեռներով, իսկ արևմուտքից և հարավից բաց էր սեմական ժողովուրդների քաղաքական և քաղաքակրթական շարժման դիմաց: Այդ պատճառով էլ այլ ցեղերի, լեզուների և մշակույթների պայքարի մեջ սեմականն առաջնություն ստացավ[40]*:*

Աշշուր *քաղաքը տեղադրված էր "Տիգրիսի հետ Մեծ Զաբի միախառնման վայրից քիչ հյուսիս՝* **Զերել Մախուլ** *բլրաշարի ձևավորած եռանկյունաձև դարավանդի վրա՝ Տիգրիսի ձախ ափին"*[41]*: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ* **Աշշուր** *բնակավայրի տեղում գտնվող քաղաքատեղիի հնագույն շերտերը վերաբերում են մ.թ.ա. III հազ. կեսերին*[42]*: Այդ քաղաքը վաղ ժամանակներում միջնորդ է Միջագետքի հյուսիսային շրջանների հետ շումերական քաղաքների առևտրում: Այնտեղ հաստատվել էին բազմաթիվ վաճառականներ, որոնք իրենց հետ բերել էին շումերական մշակույթի տարրեր*[43]*: Շումերներն (ինքնանվանումն է "սևագլուխ ժողովուրդ*[44]*") այստեղ բերեցին սեպագրի գործածությունը, կրոնական հավատալիքները, արվեստի տեսակները, նոր բարքեր*[45]*:* **Աշշուրի** *բնակչության հիմքը բացահայտելու տեսանկյունից կարևորվում է քաղաքանվան ստուգաբանությունը: Նշենք, որ տեղանվան առաջին բաղադրիչն է հ.-ե. as արմատը, որին հատկացվում են* **"օջախ"**, **"զոհասեղան"**, **"զոհարան"** *իմաստները*[46]*: Երկրորդ բաղադրիչը հ.-ե. Tor/Tur դիցանվան Sur տարբերակն է*[47]*: Այսինքն՝ քաղաքա-*

գլխավորությամբ: Սակայն քիչ սեմական աստվածներ մտան դիցարան: Դրանցից մեկն էր **Ադդուն** *կամ* **Ադադը՝** *փոթորկի աստվածը, որը նույնացվել է մինչշումերական* **Իշկուր** *աստծո հետ:* **Արև-աստվածը** *շումերերենում և աքքադերենում հասարակ անունով կոչվում էր "արև": Նրան պաշտում էին* **Սիպպարում** *և* **Լարսում:** *Սիպպարում նա նույնացվել է "բանանային լեզվի" մի աստվածության հետ: Այդ լեզվին են պատկանում նրա կնոջ՝* **Այա** *և որդու՝* **Բունենե** *անունները (История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, часть первая, Месопотамия, под ред. Дьяконова И. М., М., 1983, с. 280-281).*

[38] **Խաչատրյան Աստ.,** *Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Ե., 1933, էջ 78:*

[39] *Նույն տեղում:*

[40] **Գիւզալեան Գ.,** *Պատմութիւն Մերձաւոր Արեւելքի եւ Հայաստանի, հ. Ա, Ե., 2016, էջ 271:*

[41] *История древнего мира. Древний Восток, с. 293.*

[42] *Նույն տեղում, էջ 312: Տեսակետներից մեկի համաձայն՝ Հին Ասորեստանի բնակիչները եղել են* **խուռիներ** *(***Капанцян Г.** *Хайаса–колыбель армян, Е., 1947, с. 197), մեկ այլ մոտեցմամբ՝* **սուբարիներ** *(Հին աշխարհի պատմություն, հ. I, Հին Արևելք, Ե., 1938, էջ 229):*

[43] *История древнего мира. Древний Восток, с. 293.*

[44] *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Ե., 2007, էջ 48, ծան. 6:*

[45] **Գիւզալեան Գ.,** *նշվ. աշխ., էջ 270:*

[46] **Համբարձումյան Վ.,** *Հայերեն Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Ե., 2002, էջ 28:*

[47] **Ղարագյոզյան Ա.,** *Հայոց հնագույն պատմության հարցեր, Ե., 2015, էջ 29:*

նունը նշանակել է "Sur **աստծո օջախ կամ կացարան***": Նկատենք նաև, որ Խանիգալբատ երկրում ևս (Հյուսիսային Միջագետք) գոյություն է ունեցել Sura/Šura անունով քաղաք, որը հիշատակվել է Ասորեստանի թագավոր* **Ադադներարի Ի-ի** *արձանագրության մեջ և տեղորոշվում է Միդիատից հյուսիս-արևմուտք*[48]*:*

Հետևաբար, կարելի է արձանագրել, որ ապագա ասորեստանյան տերության կենտրոն հանդիսացող **Ասսուր** *կամ* **Աշշուր** *քաղաքը, որի առաջին բնակիչներն ունեցել են հ.-ե. ծագում, ձևավորվել է Sur աստծուն նվիրված պաշտամունքային կենտրոնի շուրջ: Նկատենք նաև, որ ասսուրների սուրաի*[49] *ինքնանվանման մեջ առկա է նույն* **Սուր** *դիցանունը:* **Աշշուր** *աստծո պաշտամունքը հարատևել է համանուն քաղաքում մինչև մ.թ.ա. II-IIIդդ.*[50]*: Ամենայն հավանականությամբ, պատմական* **Ասորիք,** *ինչպես նաև նրա* **Սուրիա** *անվանումները նույնպես ծագում են հիշյալ դիցանունից*[51]*: Հիշատակելի է, որ Վանի թագավորության* **Տուրուշպա (Տուշպա)** *մայրաքաղաքի անվան մեջ առկա է նույն Tor/Tur դիցանունը*[52]*:*

Ասուրերենը սեմական լեզու է, համարվում է աքքադերենի բարբառներից մեկը, որն անցել է զարգացման երեք շրջան՝ հին (մ.թ.ա. XX դ. սկիզբ -XVII դ. կես), միջին (մ.թ.ա. II հազ. երկրորդ կես) և նոր (մ.թ.ա. X-VII դդ.): Հին շրջանի վերջում այն դարձել է առանձին լեզու: Նոր շրջանում դուրս է մղվել **բաբելերենի** *կողմից, կրել* **արամեերենի** *ազդեցությունը և դադարել գործածվել որպես հաղորդակցության միջոց*[53]*: Սակայն այս հանգամանքը չի կարող որոշիչ լինել* **ասսուրների** *հնդեվրոպական ծագումը ժխտելու համար: Ակնհայտ է, որ նրանք վերջնականապես սեմախոս են դարձել մ.թ.ա. XX դ., սեմական ծագում ունեցող էթնիկ խմբերի գերակայության պայմաններում: Հետևաբար, անհիմն է այն տեսակետը, ըստ որի, ասորեստանյան պետությունը ձևավորվել է Առաջավոր Ասիայում բնակվող սեմական ցեղերից:*

---

[48] **Ավետիսյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 86,* **Арутюнян Н.В.** *Топонимика Урарту, Е., 1985, с. 220-221.*

[49] *Տե՛ս Большая советская энциклопедия, т. III, второе издание, М., 1950, с. 263.*

[50] *Տե՛ս Հայաստանի հարակից երկրների պատմություն, էջ 97:*

[51] *Հիշատակելի է, որ "երբեմնի տերության Անդրեփրատյան երկրամասին աքեմենյան դարաշրջանում տրված "Ասորեստան" անվանումը հարատևեց դպրության տարբեր կենտրոններում և արամեերենի միջնորդությամբ անցավ հունարենին, որպես "Սիրիոս" կամ "Սիրոս", որից և Սիրիան՝ "Ասորիք": Սակայն այս անվանումները դեռևս կիրառվում էին համազոր նշանակությամբ" (Հայաստանի հարակից երկրների պատմություն, էջ 54):*

[52] **Ղարագյոզյան Ա.,** *Պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ, Ե., 2015, էջ 5-6:*

[53] *Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. I, Ե., 1974, էջ 598:*

ОБ ЭТИМОЛОГИИ ДРЕВНЕЙШИХ ЭТНИЧЕСКИХ НАЗВАНИЙ МЕСОПОТАМИИ

КАРАГЁЗЯН А. А.

Резюме

Субары, хурриты и ассуры сыграли огромную роль в истории Месопотамии. На шумерском языке слово Su-bir$_4$/ Subar означало “страна на берегу воды”. Этническое название было обусловлено географическим фактором. Под этим названием подразумевались все этнические группы, живущие в Месопотамии, а в узком смысле–жители края Кадмухи.

Племенное название хурритов–hurr изначально являлось названием солнечного божества. Город-государство Ашшур или Ассур был сформирован вокруг культового центра, посвященного богу Сур (Tor или Tur).

В эндоэтнониме “сураи” ассуров также наличествует имя бога Сур. Ассуры окончательно стали семитоязычными в XX веке до н.э. в силу преобладания этнических групп семитского происхождения.

ON ETYMOLOGY OF ANCIENT ETHNIC NAMES OF MESOPOTAMIA

A. GHARAGYOZYAN

Abstract

The Subaris, Hurri, Assurs played important role in the history of Mesopotamia. Su-bir$_4$/Subar meant “a country on the beach of water” in Sumerian. Ethnic name was conditioned by geographical factor. All ethnic groups who lived in Mesopotamia were perceived under that name; in the narrow sense – inhabitants of Kadmuhi. Genealogical name of the Hurri was hurr, which initially was the name of Solar divine.

City-state of Ashur or Assur was formed around hieratic center devoted to the God Sur (Tor or Tur). The endonym “surai” of the Assurs has the same name of God Sur. The Assurs finally became semitic-speaking in XX century B.C. as a result of prevalence of ethnic group of semitic origin.